

նա տէր Ղեզուս իշխանուհին իրեն կին առնելով
Իսթրիական թագուհիին անգլիական եղբայր, Բոսնի-
այի քաղաքական կառավարիչ, և այն տեղի համա-
պարտական տեսչ-գործակալը : Այս մարդս խելացի
և խաղաղարար մարդ մը ըլլալուն համար ամենուրեք
առաջը յարգուածին ունի : Ուստի ասոր այս պար-
ուայս և պաշտօնի հասնելը ամենուրեք մեծապէս հա-
ճելի եղաւ . և շատ յոյս կայ՝ որ ասոր վրայ այն գա-
ւառին մէջէն խռովութիւնը վերնայ . քանզի այս
վերջին խռովութեան գլխաւոր աղբիւրը այս գա-
ւառն էր : Այս մարդս իր խոհեմ կառավարութե-
ամենուրեք սիրտը կը շահի . ամէն մարդ ասիկայ կը սի-
րեն . և այս սիրելէս կը հետեւի որ ասոր սիրտը ծա-
կելու բան մը չեն ընէր : Ամենուրեք եղաւ մարդ
զը շատ չաշխատիր իր գանուած տեղին խռովու-
թիւնը խաղաղելու : Շատ ծարրասան մարդիկ ի-
րենց ծարրասանութեան ուժը բոլոր 'ի գործ կը
գնեն բան չեն շահիր , ասանկ մարդ մը հերքէ ե որ
ըսէ թէ ես այդ բանը չեմ աստիճար . խռովութիւն
շուտ մը կը վերնայ :

ՌՈՒՍԱՍՏԱՆ : Հասարակաց ուսման վերա-
կացու նախարարին մէկ գրութեան , որ կայսեր
ներկայացուց Ռուսաց գրականութեան անցած տար-
վան վիճակին վրայ , կ'իմանամք որ 1845 ին բոլոր
Ռուսաստան տարած նոր գիրքերուն համարներն է
861 : Ասոց 795 ը Ռուս հեղինակի շարադրած , և
մնացած 66 ը օտար լեզուներէ թարգմանված են :
Ասոց մէջ չեն պարունակիր լրագիրներ և ամսու-
անգամ մը կամ շաբաթը անգամ մը շարունակ ել-
լերու վրայ եղած գրութիւնները :

Այս գիրքերուն շատն են բժշկութեան վրայ ,
իրաւագիտութեան վրայ , արուեստից և ձեռա-
գործաց վրայ , և բանասիրական նիւթոց վրայ :

Այն տարին օտար երկիրներէ Ռուսաց երկիրը
մտած գիրքերուն համարներն է 713,389 տեսակ :

Պետրբուրգի թագաւորական գրաստան մէջ 1845
ին վերջը գտնուած գիրքերն էին 444,335 հատոր
տարած գիրք , 18,229 ձեռագիր , և 355 հատ ե-
րեւելի մարդոց իրենց ձեռքին գիրք :

Այս գրաստան վերջանութեան խաղաղարար 1845 թը-
ւին ամէնը 828 հոգի եկաւ . և որովհետեւ Պե-
տրբուրգի մէջ պահապան զօրքերէն զոտ՝ որ բազ-
մաթիւ են , 500,000 հոգի բնակիչ կ'ըլլէ , ուստի
605 հոգիին մէկը այն թանգարանը կուգայ եղեր .
և ասիկայ շատ մեծ բան մը չէ :

Թէպէտ երեսուն և չորս տարի է որ Պետրբ-
ուրգ կայսերական գրաստան հաստատուած է , բայց
հոն գտնուած տարած գիրքերուն ցանկը հիմա
նոր սկստան չենել . ձեռագիրներուն ցանկը անցած
տարի լրացուցաւ , որ 28 հատոր եղաւ : Սեպտեմբր
տարեալներուն ցանկն ալ ձեռագիրներուն ցանկին
ընթացքով պիտի ըլլայ . այսինքն ամէն գիրքին
գրութեանը տեղին և ոճին և գրքին մէջ պարուն-
ակուած նիւթերուն վրայ տեղեկութիւն տալով ,
և չափն ալ ձեռագիրներուն ցանկին ամէն մէկ հա-
տարին չափովը ըլլայ նէ՛ Պետրբուրգի կայսերական
գրաստան միայն տպեալ գիրքերուն ցանկը կ'ըլլայ
683 հատոր . և 28 հատոր ձեռագիրներուն ցանկն
ալ վրան զարնելով ամէն գիրքերուն մէկէն ցանկը
կ'ըլլայ 711 հատոր : Այսքանս գիրք չէ՛ . միայն գր-
քի ցանկ է :

ՄԱՂՐԱՅ : Գաղղիական նախնաւորացիներ կը գը-
րէ : « Սաղարայի կողմէն անանկ լուրեր կ'առնենք՝ որ
գէշ բաներ կ'ըստուան : Ղեզուրի Վարդապետ
իւր պէյըն որ յոգնել չի գիտեր , և քանի որ Ղեզուրի
Պառնապետներուն գէմ կը պատերազմի , և այս վերջին
անգամիս որ Սաղարայի երկիրը փախած է նէ՛ մէկ բո-
ւլէ մը անգամ պարապ անցուցած չէ՛ , կ'ըսեն որ հի-
մա միտքը բացեր է . և Սաղարայի կայսր ըլլալու ձեռք
զարկեր է Վարդապետ հիման կայսեր տեղը : Քանի մը
նամակներ անանկ կը պատմեն որ ինքը անձամբ կայ-
սեր գէմը ելեր և հրաւիրեր է որ ամենէն ինչոյս :
Ուրիշ նամակներ կ'ըսեն որ՝ այս կայսրութիւնը
ձեռք ձգելու մտքին վրայօք աւելի յաջողութիւն
գտնելու համար իրեն ձեռքը օգնական առեր է կայ-
սերական ցեղէն մէկ մարդ մը , որ ետքը անիկայ կոր-
ծանքը գիւրին բան մըն է : Այս գիրքերուն նայինք
նէ՛ մինչեւ հիմա Պէս քաղաքը Վարդապետ Վատիրին
զօրացը ձեռքը անցած է . և Սաղարայի արեւելեան
կողմը ահագին խռովութեան մէջ ինչոյս է : Ղեզու-
րի գտնուող Պառնապետները ծանր բաներ պատա-
հելու կը յուսան , և պէտք եղածին չափ զգուշու-
թիւն կ'ընեն » :

ՈՎԿԻԱՆԻԱ : Քանի որ ամիսը Համլինը՝ որ Ու-
կրանիայի սահմանները գտնուած նաւերուն հրա-
մանատարն է , և Ամերիկայի արեւմտեան ծովերը
ներս նաւերն ալ ասոր հրամանին տակն են , վերջ-

նա ըսած նաւով անցիկ ամիս մէջ Սանտիէ կղզի-
ները գնաց : 1837 ին Լաբլադ նաւապետը Վրեթի-
նոված նաւով հոն գացած , և կղզւոյն Գամէա-
Մէա անուն թագաւորին հետ գաղափարութիւն
մը բրած էր , և յիշեալ թագաւորէն ալ 20,000
ռէպլ առած էր իրենց գրաւական (ռէպլն կամ
բէհ) , եղած գաղափարութիւնը անխափա պահե-
լու : Այս ստակը Համլինի քոյն էր . ուստի երբ
ստուգեց որ այն արեւելէն մինչեւ հիմա թագաւո-
րը եղած գաղափարներուն գէմ բան չէ՛ ըրեր , Պը-
ռանայի հիւպատոս Պ . Տիւտուային հետ խորհրդ-
գաղափարով այս գրաւական տրուած ստակը թագա-
ւորին ետ տուաւ : Եւ յիշեալ Սանտիէ թագա-
ւորը Պառնապետ պաշտպանութեան տակը եղած
Համլինի քաղաքներուն և ժողովուրդին շատ
օգնութիւն կ'ընէ . և այս անգամ որ այս ստակը
առնելով Պառնապետ տեղութեան հաւատարմու-
թիւնն ալ իր փորձովը հասկըցած եղաւ , աւելի
սէր կը կապէ Պառնապետներուն հետ : Քանի որ ամի-
սը Համլինը՝ նաւային զօրքը հետը առնելով Վա-
մէա-Մէա թագաւորին տեսութեան գնաց , և
ալիւր գէնքեր ընծայ տուաւ թագաւորին և անոր
նախարարներուն . որ շատ սիրով ընդունեցին : Թա-
գաւորն ալ հայցիկով մը ըրաւ նաւապետին և ծու-
կային զօրաց մեծերուն . և այս պատճառաւ հան-
դէս ալ ընել տուաւ տեսակ տեսակ խողերով . և
միւս օրը թագաւորը ինքը նաւը գնաց . և իրեն ե-
ղած պատկաններուն շատ հաճութիւն ցըցուց :

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԱՆԱ : Քանի որ Հէքի և Քաւի-
գի և ուրիշ ապստամբները հնազանդութեան տակ
մտան , կը յուսացվէր որ այս ընդարձակ կղզւոյս մէջ
բնակող անգղիացի գաղթականացի վրայօք պէշ լու-
րեր առնուի . բայց այս յոյսը պարապ գնաց : Յի-
րաւի կղզիին մէկ կողմը գաղթականները բիւ մը հան-
գարտութիւն գտան , բայց միւս կողմը նոր խռ-
վութիւններ եղան : Ինչի կղզեցիները իրենց մեծե-
րուն անգղիացւոց հետ բրած պայմանները չընդ-
նելով մէկ տեղ ժողովեցան և Վէլինդան քաղաքը
խաղաղութեամբ բնակող անգղիացիներուն բնակա-
րանները յանկարծակի կոխեցին . երեսուն տընիւրի
չափ փախցուցին իրենց տեղերէն : Թէ որ կղզիին
կուսակալը Պ . Կուէյ՝ այս խռովութիւնն նոր եղած
աստիճար զոյգ չըրաւ նէ՛ պէտք է որ նորէն
պատերազմ բանալու պատրաստ ըլլայ . և ասանկ
տեղեր անգղիացիները պէտք եղածին չափ շատ չը-
լալուն համար յաղթութիւնը գոհաւորաւ ձեռք կը ձը-
գէ . ասոր օրինակ է Վալիստանի Վրուս բարեյու-
սոյ քաղաքին գաղթականներուն քաշած վնասները :

ԲԱՖՐԱՍՏԱՆ : Ուկրաինոս նաւուն բերած
լուրերը մինչեւ յունիսի 16 կը հասնին : Անգղիացի
զօրքերը Սոմերսէթ զօրապետին առաջնորդութե-
ր Վալիստան վրայ յարձակեցան Պիլիպպեոս ըստ-
անդին մօտ գաղտնի մէջ ստատիկ պատերազմ եղաւ .
Վալիստան ուժով կուռեցան , բայց վերջապէս յաղ-
թուեցան . մեռնողները խիստ շատ եղան . թէ մեռ-
նող և թէ վերաւորովը քանի մը հարիւր հոգի կ'ըլ-
լեն : Ինչիկընդէն մեռնող և վերաւորուած ամէնը
17 հոգի կ'ըլլեն . ասոց մէջն են Վալիստ զօրապե-
տը և Սըր Տարէլ :

ԱՅՈՒՅԻՆ

Ամիսը նաւով թագաւոր և իր հաստատուած բան
անտարակցա շուտով կը կործանի . իսկ միաբանու-
թեամբ կործանուած բաները կը կանգնեն , կ'ամ-
րանան : Այս բանին ճշմարիտ ըլլալը Վատուած մեղ-
հաղարաւոր տարիներէ 'ի վեր հասկըցունելու հա-
մար Բաբիլոնի զարմանալէն աշտարակին խափան
ուղի կամեցաւ նէ՛ նախ այն աշտարակը չինող
յանդուգն մարդոց լեզուներն ու կամքերն մէկ
մէկու հակառակ գարծուց , ետքը հովմը հանեց կոր-
ծանեց որ անմիաբանութեան զղուելի յիշատակը
երկրիս երեսէն բնաջնջ ընէ : Ուրեմն Իւսիւրա-
րու Վալիստան ձեմարանը որ Հայոց ազգին թէ եկե-
ղեցականներուն և թէ աշխարհականներուն , թէ ազ-
գապետ գերապատիւ Վիրաններուն և թէ հաս-
րակութեան միաբանական սիրով ու ջանիւրը հա-
տատուեցաւ և նպատակն ալ միմիայն ազգային
յառաջագիմութիւնն է , անշուշտ յաւիտեան հա-
տատ պիտի մնայ և իւր բարի նպատակին շուտով պի-
տի հասնի :

Վալիստան ձեմարանը ամիսս առաջին օրը բաց-
վեցաւ թէ սրբազան Պատրիարքին թէ յարգի ա-
զաններուն և թէ աշակերտաց որդիասէր ծնողաց ներ-
կայ գտնուելով : Աշակերտները նախ կարգաւ ձե-
մարանին մէջն արթնատուր ինչոյս առաւօտեան ա-
ղօթքին ընելու և իրենց համար Հոգւոյն սրբոյ շը-

նորհքը ու օգնութիւնը խնդրելու որ երթալը ուս-
ման դժուար ճամբանին սիրով ու երկայնմութե-
քակեն : Յետոյ նոյն գեղեցիկ կարգով հանգստա-
րանը եղան և կառավարչին հրամանաւ ամէն մէ-
կը իրեն համար որոշուած դրամեղանին առջեւ
կայեցաւ : Հոն Սրբազան Պատրիարքը թէ վար-
ժապետաց թէ աշակերտաց և թէ անոց հօրը պէտք
եղած օգուտաւոր խրատները տալէն և քաջալե-
րական խօսքեր ընելէն ետեւ օրհնեց զանոց և ա-
նոց բնակած տեղը . վերջապէս ընդհանուր Վրդին
և այս երեւելի գործին համար յատկապէս միմիայն
աղգաւորական ուղևոր աշխատող անձանց ալ շնորհա-
կալ ըլլալով մէկնեցաւ հանգստարանէն , և աշակերտ-
ներն ալ շնտակ սեղանատուր ինչոյս , քանզի կէս օր
էր . սեղանէն ետեւ զըօսարանը ժամ մը ժամանակ
անցունելէն ետեւ դասարանը դադրին և իրենց պա-
հէքը ընդհանուր պատուէրներուն տեսարակը օրի-
նակալու պարտաւոյս և ասիէ սկսեց իրենց հոն ը-
նելը աշխատութիւնը : Որովհետեւ խօսքին կար-
գին եկը , ձեմարանին վերաբերեալ քանի մը հարկա-
ւոր բաներ կան , որոնք ազգին լրութեանը ծանու-
ցանելու արժան համարեցինք :

Ղեմարանին բոլոր աշակերտներուն թիւը չորս
տարուան մէջ մինչեւ 260 ի պիտի ելայ :

Այս 200 աշակերտաց մէջէն 160ը տարեկան
3,000 դրուաւով պիտի ըլլան և 40ը ձրի . բայց
ձրիներուն ծախքին համար ձեմարանին ընկերու-
թիւնը 500,000 դրուաւով տակ հաւաքելու կը պա-
րապի . այս ըստակէն որչափ հաւաքէ նէ այն գա-
ւարին բերելը շահին համեմատ ձրի աշակերտ պի-
տի առնուի : Իսկ տարին 10 էն աւելի տունուելու
կանոնին չի ներքն :

Ղեմարանին գլուակ տուող հայրը տարեկան 3000
դրուաւով տալէն 'ի զատ սա հետեւեալ ծախքերն ալ
իւր վրան է , այսինքն

- 1 Երկրորդայ քառօլա .
- 1 Նիւթին ամէն պէտք եղածովը .
- 6 Ձեռք լաճալը , այսինքն
 - 6 Շապիկ ,
 - 6 Վարդապետ ,
 - 6 Ուսուցիչ ,
 - 6 Վաշիկնակ ,
 - 6 Վարդապետ ,
- 2 Գիշերուան հանգերը , մէկը ամառուան՝ մէկն
ալ ձմեռուան .
 - 1 Չուստ հողաթափ .
 - 1 Երեսի խաւով .
 - 1 Փոքր հայել .
 - 1 Սըն սանտր .
 - 1 Սեյրէլ սանտր .
 - 1 Հանգերի ֆոշա .
 - 1 Գլուա ֆոշա .
 - 1 Կոստի ֆոշա .
 - 1 Գլուա սանտրեւել լաթ .
 - 2 Ձեռք հանգերը , մէկ ամառուան՝ մէկ ալ
ձմեռուան .

Իսկ ասոց ձեւը՝ գոյնը՝ ընկերութեան խորհրդ-
գարանէն իմանալու է որ ամէն հինգշաբթի բաց
է ասպառձի խանը :

Չորս տարուան մէջ աշակերտաց ուսանելը
բաները հետեւեալներն են :

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ	Տաճիկերն .
Հայկաբանութիւն .	Կրկնառումնար Վաճա- ռականութեան .
Մաթեմատիկա .	ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ
Վերահասարակութիւն .	Բնական գիտութիւն .
Սրբազան պատմութի .	Խաղաղութիւն .
Գրականութիւն .	Տրամաբանութիւն .
Վերջապետութիւն .	2ՈՐԲՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ	Ղարտասանութիւն .
Վալիստ և Երտքին պատմութիւն .	Բարոյական փիլիսոփայ- ութիւն .

Թէ որ եկամուտը աւելցունէ ձեմարանը ինչպէս
առ հասարակ կը յուսացուի , ան ատենը իւր մէկ մը
ատանկ ձանցողած ձեմարան անուանը յարմար գի-
տութիւններն ալ կը մտնայ մէջը :

Այս ձեմարանին ամէն մասամբ հոգը տանողըն-
կերութիւնը առայժմ 80 հոգիէ բաղկացած է այսին-
քն ,

- 1 Վարդապետ .
- 5 Երեքին տեսուչ .
- 5 Երտքին տեսուչ ,
- 1 Երեսուցի .
- 11 Խորհրդական .
- 11 Վանձապետ .
- 40 Վարդապետ .
- 6 Պատուոյ անգամ .

